



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲՄՐՈՑԱԿԱՆ



Ն Ս Ս Ս Ս Ս Ս



ՌԵԶԵՐՎԱ

1930

ՀԱՅՈՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՁԸ

ԹԻՒ 10



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԲ ՇԱՐԱԴՐՈՒԱԾ ԵՆ “ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ,”



Մեր դասական մատենագրության մէջ իւր յատուկ տեղը զբաղած է այդ անուամբ ծանօթ մատենանը, լինելով հայ եկեղեցւոյ հին վարդապետութեան կարեւոր աղբիւրներէն մին։ Տանջուած գիրք մ'է մատենագրին տեսակետով, հեղինակն իւր աշունքը դրած չլինելով անոր վրայ։

Նոյն ճառից զլինին, ինչպէս յայտնի է, որոշմուած կը գտնենք այսօր Լուսաւորչի անունը։ Զայդ կը կարդար արդէն Նարեկացին եւ ժ. դարուն, երբ Նրգոց երգոյն մեկնութեանը մէջ կ'ընէր անոր ժիւ և ի ճառերէն՝ յանուն նոյն հայրապետին՝ Եւ. Գր. Մագիստրոս զանոնք նոյնպէս կը վերագրէր նոյն Հօր, գրելով. «Զդիւրն իւր հաւատոյ Յաճախարանն որ անուանին»։ Ի նպաստ աւանդութեանս աւելի հին վկայութեան չեմ հանդիպած.

և դիւրին չէ ճշդել՝ թէ ե՞րբ տրուեք է մեր առաքելոյն անունն այդ ճառերուն։

Լուսաւորչի ինքն իսկ չկնքեց անշուշտ զայդ ու զրոց տիտղոսը, այլ երկրորդ մը, հաւանօրէն թելադրուած Սգաթանգեղոսի վկայութենէն՝ թէ «սկսեալ երանելոյն Գրիգորի ձառս յաճախագոյնս դժուարապաւ տուամ... յորս բազում նմանութիւնս և օրինակս յանցաւորաց գտանել աստի, առաւել վասն յարութենական յուսոյն՝ առ ի հանդերձեալսն յերկրեալ»։ Կը համարիմ՝ թէ մատենիս հայ խմբագրչին շատ խօսութիւնը, որ ըսածներուն մէջ հաշիւ կամ ճշդութիւն որոնել չի գիտեր, յետ զետեղելու Գրիգորի վարդապետութիւնը

1. Գր. Նարեկ. Մատեն. վեհաթի, 1840, 335, 342.
— 2. Տաղաւադ. վեհաթի. 1868, 72. — 3. Աղաթ. վեհաթի, 1835, 657.

ՈԱՐՄ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 1930

26



մատենին կեդրոնը, ինչպէս կը պահանջէր պատմութեան կարգը, գրեին վերջերն այդ խօսքերով կը դառնայ վերստին ակնարկել նոյն շարադրութեան, յորում ստուգել «յանցարաց» (քնութեան վաղանցով գարդերէն) օրինակ կ'առնուի «վասն յարութեանակն յուսոյն» հետեւեալ բացատրութեամբ. «Արդարեւ իսկ գարունն բուսաբեր զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ» և այլն¹, Ուրիշ աղբիւր չէր տեսեր, այլ այս տեղոյն կ'ակնարկէր նաեւ Յովհ. Օմեհցին, երբ կ'ըսէր՝ Թէ «սուրբ Գրիգոր ըստ տէրունական ասակին զյարութիւն մեռելոց՝ բուսոց և տնկոց օրինակէր ի գարուն բուսաբեր և ի զալարանալ մարդկան ի գերեզմանէն»², Ուրեմն Ազաթանգեղոսի յիշած «ճառք յաճախագոյնը», իւր իսկ շարադրութիւնը, բնաւ կապ չունին մեր «Յաճախագատեմ ճառից» հետ, ու ծայրի նմանութիւնը պատահական է միայն։ Եւ այդ իսկ բառեց՝ Լուսաւորչին ընծայելու համար վերջինները։

Կորին, զոր Նորայր Բիւզանդացի խմբագրելի ցոյց տուաւ Ազաթանգեղոսի, նոյն բացատրութիւնը կրկնեց նաեւ Մեսրոբայ մասին՝ անոր վարուց մէջ, գրելով այսպէս. «Ալեւսալ Բիւզանդին Մաշթոցի ձառ յաճախագոյնս գիրապատմս, ... յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց աստի, առաւելագոյն վասն յարութեան յուսոյն առ ի հանդերձեալսն յերիւրակ կազմեալ»³, Ազաթանգեղոսի պահած վարդապետութեան յարմարող այս խօսքը՝ անյարմար էր Մեսրոբայ համար, և զարնան օրինակը չկայ Յաճախագատեմ մէջ, զոր Կորեան մէկ անորոշ վկայութենէդ յորդորուած, վետտըր հայազէտը բաժնեց Լուսաւորչին ու տուաւ Մեսրոբայ Գերմանացի բանասէրն աղոր աւելի զրական փաստեր ալ մատնանշեց։ Նոյն ճառից հայ հեղինակը կը խօսի ու

Հոգւոյ մասին այնպիսի դարձուածներով, որոց մէջ զգալի է կոստանդնուպոլսի Ժողովոյն (381) վարդապետական սահմանին ծանօթութիւնը։ Ս. Գրոց կոչումներու մէջ ակնհերեւ է հայ Թարգմանութեան լեզուն։ Զորաշարական կրօնից դէմ ծածուկ մարտում մը կայ, յատկապէս Դ ճառին մէջ, «զորու և զհոր» պաշտողաց հակառակ՝ Մեսրոբէն յառաջ չէր կրնար ուրեմն գրուած լինել Յաճախագատեմը։ Ոչ ալ յետոյ. վասն զի, կը յարէ նոյն բանասէրը, հոն կը յիշուին Արշակունիք դեռ իբր ներկայք, այսպէս. «Զի ի Հայս ոչինչ մեծագոյն և ի Պարս» քան զԱրշակունիք տոհմ, որ և յԱրաւամէ սերեցան աստ. նաեւ յամենայն ազգս Թագաւորք երկրի (մեծագոյն են քան զՀայատակ) ըստ անսուտ բանին տեառն ամենեցուն։ Այլ եթէ ոչ զգաստանայցեն ի բարի, աւելի պատուեանս ընկալցին ի տեսունէ, և ծառայք նոցա՝ որ հաճոյ եղեն Աստուծոյ, Թագաւորեալք փառաւորեցին ի տեառնէ. և նոցա պարտաւորեալք յաղագս մեղաց, պատժեցին յարդար իրաւանցն»⁴։ Պարզ է ուրեմն՝ որ Մաշտոցի գործն էր Յաճախագատեմ գիրքը, հետեւցուց ու կնքեց վեհապետը՝

Թէ մատանդ Լուսաւորչին չէ, կատարեալ իրաւունք կու տանք գերման բանասիրին, և անոր փաստերուն վրայ կրնանք յաւելուլ նաեւ մերինները։ 1. Այդ գործն ուղղակի հայերէն գրուած լինելու երեւոյթն ունի, և ձրի ու անբնական է զայն հայ լեզուով և յոյն գրով շարադրուած կարծել ու Գրիգորի, ինչպէս ըրաւ Հ. Զարբհանլանը⁵ ու կրկնեց հանգուցեալ Ս. Դուրեանը՝ — 2. Զի կրնար և ոչ յունարէն գրուած լինել անոր համար՝ որ այդ պարագային մեր ոսկեխօս Թարգմանիք՝ որ հայացուցին յոյն Հարց գործերը, ամենէն յառաջ պիտի Թարգմանէին Լուսաւորչին այդ երկասիրութիւնը. և որոյ մէջ

1. Ագ. Բ. 483. — 2. Օմե. Մատեն. վճեաւ. 1883, 92. — 3. Կորեան, վճեաւ. 1883, 21. — 4. Եգիպտոս. վճեաւ. 1883, 26. — 5. Անգ. 199. — 6. Հայկէն.

այլատիր. Ֆիթթերի. Բրգ. Հ. Տաշեան, վճեաւ. 1895, 70-78. — 7. Պատ. հայկէն. հին զար. 1897, 199. — 8. Պատ. հայ մատեն. 1885, 8-9.

սակայն կը պակսի Ոսկերիբանի և Կիրդի չքնաղ լեզուն. ապացոյց՝ որ թարգմանիչը չեն տեսեր զայն. — 3. Եթէ Ագաթան գեղոսի օրով գոյութիւն ունենար Յաճախապատուը, Լուսաւորչի պատմիչը չպիտի կերտէր անոր անուամբ ծանօթ վարդապետութիւնը, սրբոյն երկասիրութիւն մը տալու նպատակաւ: — 4. Նոյն գրոց ի՞նչ ճառին մէջ նկարագրուած է վանական կազմակերպեալ կեանքը, որ Լուսաւորչի օրով տակաւին աներեւոյթ էր ամբողջ ըրիտաւանայ աշխարհի մէջ, թող թէ ի Հայս. վկայ՝ ս. Գրիգորի անապատական կեանքն իսկ՝ Ուստի հայրապետս կապ չէ ունեցեր Յաճախապատուի ճառեւրուն հետ:

Սակայն գերմանացւոյն տուած փաստերն անբաւական են նաեւ Մհարոյ բնծայելու մեր քննած երկասիրութիւնը. և ահա պատճառներս Առաջին՝ ս. Գրոց վկայութիւնը կոչուած են հոն մերթ ըստ հայ թարգմանութեան ու մերթ նոր թարգմանուած, Գրիգորի՝ որ Մհարոյ պառաջին աշակերտը երբեք չեն կապուեր սահական թարգմանութեան հետ, որուն ընտելանալու համար հարկաւոր էին երկար տարիներ. որով իրենց վարդապետն ալ ապատօրէն պիտի վարուէր իւր կոչումին ըստ մէջ, և ոչ խառն գործածէր, եթէ իրենը լինէր մեր քննած մատենաւր: Գառն զինք շատ ուշ ժամանակի գործ ալ չէ. այլ այնպիսի շրջանի մը, ուր սահական թարգմանութիւնը սկսած էր ընտանենալ, այլ ոչ զեռ տիրապետած: Փոքր թարգմանչաց գործունէութեան շրջանը կամ էր դարու երկրորդ կէսն է այդ. — Երկրորդ՝ մագդեղականութեան դէմ արտայայտութիւնը ևս կը պատշաճին աւելի այդ շրջանին, ուր Պարսից յարուցած կրօնական հալածանքը ստիպեց սրել հայ քաջաց նետերն ու Եզնկայ գրիչն անոնց դէմ: — Երրորդ՝ հարկ չկայ ներկայ իմաստով առնուլ Արշակունեաց ակնարկութիւնը Զի նախ՝ բայ չկայ անոր մէջ, ոչ անցեալ, ոչ ներկայ. Յետոյ՝ Հայոց հետ խառն կը յիշէ Պարսից Արշակունիքն ալ, որոց գա-

հը գիտենք՝ որ 226էն ի վեր կործանած էր արդէն: Եւ ինչպէս աղոնք անցեալ էին, կրնան մերոնք ալ անցած լինել, և հայ հեղինակը կոչել մերձաւոր անցելոյն յիշատակը, խառնելով զանոնք ընդհանուր յիշատակութեան մէջ «Թագաւորաց երկրի»՝ անցելոց, ներկայից և ապագայից, որոնք օր մը պիտի ելնեն Աստուծոյ դատաստանին առջև: Դարձեալ՝ անոր հետքէ ոչ զգաստանայցեն ի բարի՝ զետեղուած է յետ «Թագաւորաց երկրի», և անոնց կը վերաբերի, ոչ թէ մեր խառնակեաց Արտաշէսի, ինչպէս կարծեց գերմանացին: — Զորրորդ՝ վեհաբնէ չէր կարող տեսնել, բայց մեք կը տեսնենք՝ որ Յաճախապատուը հեռի է առաջին թարգմանչաց ոսկեղէն բարբառէն, ինչպէս ըսի, և դժուարին է հաւատալ՝ որ անոնց վարդապետն աւելի տկար լինէր մարդէն լեզուին մէջ քան իւր աշակերտները, որ իւր դպրոցին մէջ և իւրմէ ստացան նոյն լեզուին պերճանքը: Այս դիտողութիւնը կը պահանջեն՝ որ նոյն գիրքը հեռացնենք Մհարոյն ևս, ու տանինք կրտսեր թարգմանչաց շրջանին մէջ: Այս այս ունինք յոյժ կարեւոր կոտան մ'ալ, Գաղկեդոնի ժողովոյն յիշատակութիւնը նոյն ճառից մէջ, որ կու գայ վճառականօրէն հաստատելու տեսութիւնս անոնց ժամանակի մասին:

Ի՞նչ կամ վերջին ճառին մէջ կը կարգանք հետեւեալը. «Ամենայն ուղղափառ ժողովք հայկազգոսաց, որ զուգափառ հաւատան հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովելը. եղբայր ոք, ասէ, մի՛ իշխեսցէ ի վանայն ելանել կալ ուր և կամեսցի՝ առանց կամաց վերակացուին և եղբայրութեան. և որ ոք յանդէմալ զայս առնէ, ընդ նզովելը կապեսցի ի հարցն»: Այն ժողովներ՝ որ «զուգափառ հաւատան հաստատեցին», անկասկած ընդհանրականներն են, որոցմէ՛ մտանք վարդապետական նաց հետ նաեւ բարեկարգական «կանոն սահմանեցին», ինչպէս են Ա Նիկիականը

(325), Գաղկեղոնեանը (451) և Ռ Նիկիականը (787): Փննելով աղոնց կանոնները, կը տեսնենք՝ որ նախ քաղկեղոնեանը զարգեր է վանականաց խնդիրներով, և իսկապէս իւր գործոց մէջ կը գտնենք Յաճախապատմի յիշած կանոնը, որ մասն է անոր Գ երկար յօդուածին. « Միանձունք... կացցեն միասցեն ի տեղիսն՝ յորս հրաժարեցին յաշխարհէ՝ ևն. և այս սահմանը չպահողը «վճռեմք նզովակալ զու»։ Նոյն կանոնը կրկնեց յետոյ Նիկիոյ քի ժողովն ալ այսպէս. « Զէ արժան միանձին կամ հաւատաւորին թողուլ զիւր մե՜նաստանն և զնալ յայլ՝ և այլն՝ (ԻՌ)։ Այս զոյգ ժողովներէն ո՞րն եղաւ արդեօք մեր հեղինակին աղբիւր։ Նիկիականը չէր կրնար լինել, նախ՝ հանդիպելով այն շրջանին՝ ուր մեր յարաբերութիւնը խզուած էին Յունաց հետ, և մերոնք չէին կարող առնուլ իրենց չընդունած ժողովին սահմանը։ Յետոյ՝ Նիկիական կանոնը նզովք չունի, ինչպէս ունին քաղկեղոնեանն ու Յաճախապատմուը։ Հուսկ՝ մեր ի՞նչ ճառը, որ է «Խորատը ճշմարտաց», այնքան հին է՝ որչափ միւս ճառերը, յայտնի իւր գրութեան հաւասար ոճէն, և ս. Գրոց վկայութեանց ազատ լեզուէն։ Բովանդակութեանը ալ կը համաձայնի Նիլշէի է «Յալգազ միանձանց» ճառին ու ժամանակին հետ։ Կը յիշուին հոն «տեսուչը եղանց հողագործաց կամ խաշանց արօտականաց» (214), և Նիլշէ կ'ըսէ, « ունկնդիր եմք բոտաշման խաշանց մերոց »։ Առաջնոյն մէջ՝ կոշկի պաշտօնէից կը յանձնարարուի հօգալ «գիրարանչիւր զպէտսն կոշկաց» (214), և երկրորդը կը բողոքէ՝ թէ «կօշկից օտար մերոց յանդիմանեն զմեզ» (401)։ Ե զարու հեղինակին է ուրեմն այդ ճառն ալ, շարադրուած ժամանակի բարուց համեմատ, և նոյն հեղինակէն իսկ յատաժ բերուած է քաղկեղոնեան կանոնն ըստ իմաստին, ոչ ըստ տառին։

Արդեօք կարելի չէ՞ որ մեր քննած կանոնը յետամուտ լինի ճառիդ մէջ։ Ոչ, և ահա փաստերը։ 1. Ս. Ղազարու երեք զրչագիրը զայն ունին նոյն ձևով, որ է

ըստ սպագրին։ Եւ մին միայն (թ. 125), որ ամբողջ ճառը փոփոխեր է և գրեթէ նոր շարադրել, մեր կարեւոր վկայութիւնն ալ վերածեր է այսպէս. «Նա հաւանութեան ժողովոյն հպիսկոպոսացն՝ որ զհաւատսն գրեցին ամենայն ուխտիւն հանդերձ, զայս հրամայեցին՝ զի եղբայր որ ի վանացն մի՝ իշխեսցէ ըստ կամս ելանել և մտանել, և ընդ նզովիւր կայեցին »։ Յայտնի է հոգ միջնադարեան ձեռքն իւր ռամփօթէն ետ շաղկապով և աղաւաղ շարադրութեամբ, Հանդերձ այսու ինքն ալ ունի մեր կանոնը յանուն «Ժողովոյն հպիսկոպոսաց»։ Ուրեմն հարազատ է այն ըստ բոլոր զրչագրաց։

2. Յիշատակութեան ձեւը կը պահանջէ՝ որ Գաղկեղոնի ժողովոյն կանոնը ընդունուած լինին թէ կըրողէն և թէ զայն ընթերցող հայ հասարակութեանն։ Այս թէ ոչ՝ հայ գրիչը վանականաց Լանոնը յիշեցուցած պիտի լինէր իւր ազգայնոց՝ անոնց անձանթ յոյն բնագրէն, և անձանթին հանդէպ յարգանք պահանջած, ինչ որ անտեղի կը լինէր։ Արդ՝ ունեցած ենք երկու շրջաններ, յորս քաղկեղոնեան ժողովն ընդունուեր է ազգէս։ Առաջինն է՝ նոյն ժողովոյն զումարումէն մինչև հայ եկեղեցւոյ բաժանումը, որ կատարուեցաւ 591ին. և յորում ամբողջ Հայութիւնը կը ճանաչէր նոյն ժողովը հաւասար միւս երեք տիեզերականաց, ինչպէս բազմապատիկ փաստերով հաւաստած եմ այլուր¹, և հոս չեմ կրկնել։ Երկրորդ շրջանն էր կիլիկեանը, յորում դարձեալ ընդունեցաւ զայն հոն հաստատուած ամբողջ հայ ազգը, հայրապետով ու թագաւորով։ Ահլը՝ կիլիկեցիք չէին կարող ներմուծել Յաճախապատմի մէջ վանականաց կանոնը. որովհետեւ անոնց ծանօթ էր «Երկուց բնութեանց» քաղկեղոնեան սահմանը միայն, բայց ոչ և նոյն ժողովոյն բարեկարգական կանոնները, որոց հետքը չկայ բնաւ

1. Pitra, I, 524. II, 120: — 2. Եղիշէ, Վեհա. 1898, 402. — 3. Կարեւոր թղթեր, 356-398. — 4. Ար. 498- 509.

ոչ հին կանոնադրաց և ոչ կրիկեան մատենադրութեան մէջ, Հետեւաբար յիշեալ կանոնն ընդունուեր է առաջին շրջանին:

Յ. Նոյն կանոնը կոչած է՝ ըստ իմաստին՝ նաև Պարտաւայ ժողովք, որ զուամարուեցաւ 768ին, Սին կաթողիկոսի ձեռքով. և է այսպէս. «կրօնաւոր՝ որ ասեալ է զկրօն սրբութեան, և տեղափոխ լինի յուխտէ յուխտ, արգելեալ լիցի, և մի՛ ոք իշխեսցէ զայնպիսին ընդունել, այլ ուր ընծայեցան Քրիստոսի՝ ի նմին տեղի կատարեսցէ զատարինութեան իւրոյ զհանդէս և կատարեսցի» (կան. Ժե), Ժողովս զայս չէր կարող առնուլ Բ Նիկիա կաննն, որ կատարուեցաւ իւրմէ 19 տարի յետոյ: Բայց անշուշտ աղիւսս ունի կամ Թաճարապատմի և կամ քաղկեդոնեան կանոնաց հետ: Չէր կրնար ինք տալ սահմանահետագայ ձեռքով մը — Թաճարապատմին, որ իւր կոչածն առեր է «զուղափառ հաւատան հաստատող» ժողովէ մը. իսկ Պարտաւայ ժողովը հուստոյ խնդիր չունեցաւ, այլ լոկ բարեկարգական, Հետեւաբար Թաճարապատմը քաղկեդոնեանէն առաւ, և Պարտաւայ ժողովն աւղոնց մէկէն կամ միւսէն: Որով միտք հնազոյն էր Թաճարապատմի կոչումը քան զվերջինդ: Եւ իւր բացատրութիւնը՝ թէ «ընդ նոսրիւր կապեսցի ի հարցն», ուղղակի ակնարկութիւն է Քաղկեդոնի հարց սահմանին՝ թէ «վճիմօք նոսրեալ զուլ». և այս իսկ եղած է իւր անմիջական աղբիւր:

Ը. Զառոյց հեղինակը քաղկեդոնեան ժողովը կը դասէ այն ընդհանրական «ուղղափառ ժողովոց» մէջ՝ «որ զուղղափառ հաստատան հաստատեցին»: Իբր յայսպիսի կը ձանձաղէր ուրեմն ինք այդ ժողովը, և նոյնպէս կը ձանձաղէր նաև Հայրութիւնը, որուն կը յիշեցնէր անոր վճիմը, Հետեւաբար այդ հեղինակը կ'ապրէր ճիշդ Եղարուն, երբ Քաղկեդոնի ժողովը կը մեծարուէր ազգէս. և ուր մեր եկեղեցին կ'ընդունէր տեղեկութեան ժողովոց ոչ միայն վարդապետական սահմանները, այլ անոնց տուած բարեկարգական կանոններն ալ,

Հայացնելով զանոնք, ինչպէս Նիկիայ Ս. Ժողովինը: Եւ ասոնց պէս ընդուներ էր քաղկեդոնեաններն ևս, որով կրնար Յաճախապատմի գրեյը յիշեցնել զանոնք Հայոց, ըսելով՝ «կանոնն սահմանեցին եկեղեցւոյ»: Աղոնք դեռ. կրնային ապրիլ ու մծաբար իւր մեր քաղկեդոնեան հզօր կուսակցութենէն, որ անպակաս եղեր է եկեղեցական բաժանումէն մինչև վերջ, և ուղղակի աղբիւր դառնալ նաև ժողովոյն Սինի, որոյ հակաքաղկեդոնութեան ապացոյց չունինք: Այս պարագային՝ քաղկեդոնեան կանոնը աւելի քան երեք դարու կեսնք մը կ'ունենան մեր քով:

Վերջին տեսութիւն մ'աւել. Եթէ Քաղկեդոնի ժողովը Թաճարապատմի գրութեան ժամանակ առաջին ու միակ տեղեկեցական էր՝ որ զրբեր էր վանափոխութեան արգելքը, ինչպէս և ինչ տրամաբանութեամբ համեմատն ժողովոց» վերագրէր զայն հայ հեղինակը: Եթէ պարզապէս «ժողովը» ըսէր, տակաւին կարելի էր ճարտասանականն ձեւէն ձեւ մը համարել, և անորոշ յոգնականին մէջ եզակի միտք մ'իմանալ: Բայց ամենայնը կ'ընդհանրացնէ և իսկապէս կը յոգնականացնէ ժողովը: Որով մեք չինք սխալուի՝ հետագայ ձեռքէ մը խանգարուած համարելով զայդ, և ենթադրելով այսպիսի սկզբնագիր մը. «Ուղղափառ ժողովն եպիսկոպոսաց ի Քաղկեդոն» որ զուղղափառ հաստատան հաստատեց և կանոն սահմանեց եկեղեցւոյ, և զայս սահմանեց նոսրիւր. Եղարայր որ, ասեւ, մի՛ իշխեսցէ» և այլն: Ուշագրաւ է սա վերջին եզակի ասեւ, որ բնագրին է: Եթէ վկայութեանը յոգնականն ձեւը ճարտ. հեղինակին լինէր, պատշաճ ու բնական էր՝ որ այդ բայն ալ ասեւ գրէր: Որով ներելի է համոզուիլ խանգարուած լինելուն, և հետեւցնել՝ թէ խանգարիչն իւր ձեռքը չհասցուց մինչև բայիդ, որ եզակի ձևաց: Աղոնք քաղկեդոնեան կանոնը մեր կանոնադրեցնէ անոր համար արտաքուստը ևս,

1. Հմտ. Կորսեւր Խիդիբեք, 391-94, 408, 445 էւս. — 2. Ար. 474.

զի նոյն ժողովոյն անունն իրենց վրայ կը կրէին, ինչպէս ցարդ ամէն կանոններ ու նին իրենց հաստատողաց անունները, և ուրիշ գրիչներէ ալ նոյն անուններով կու չուեր են սովորաբար:

Յամենայն դէպս՝ բնաւ կասկած չկայ՝ որ քաղկեդոնեան կանոնը ընդունուած ու հայացած էին ազգէս՝ եկեղեցական բաժանումէն յառաջ, և անոցմէ առաւ Յախապատմի հեղինակը վանականաց վերաբերեալ յօդուածը: Ուրեմն և Քաղկեդոնի ժողովէն վերջ գրուեցաւ մատեանդ, նոյն ինքն Ե դարու երկրորդ կիսուն, ինչպէս ըսի, և կրտսեր թարգմանչաց միոյն ձեռքով, ցրտցնելով իւր մէջ՝ տակաւին ընդ-

հանրական Եկեղեցւոյ հետ հաղորդակից Հայութեան հոգեբանութիւնը, և նոյն շրջանին յատուկ վարդապետական սահմանները. ինչպէս՝ յետ մահու անմիջական հատուցմունք՝ ըստ իւրաքանչիւր արժանեաց (151), բարեաց վարձատրութիւն (128, 152, 248), չարերու պատուհաս (142), թեթեւամեղ հոգեոց քաւութիւն՝ նպաստներով (141), խոստովանութիւն մեղաց՝ յայտնութեամբ խղճի (63, 174) և այլն, որոց մէջ իրեն ձայնակից են Եդնիկ, Մանդակունին և ուրիշներ նոյն դարէն, որ և է տարակոյս չթողլով անոր Ե դարուն լինելու մասին:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑՈՒՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ՝



Ա.

Էջ 59. տող 26

«Չի թէպէտ մեղաւոր է, այլ զրոշմեալ է սուրբ աւագանին ծննդեամբ, հմուտ է փրկութեան խնդրոյն, լուեալ է զլուր քաւորութեան աւետարանին կենաց»:

Ուղղել ընդգծածն՝ խորհրդոյն.

Ս. Սահակ կը խօսի կրթով կուրացած նախարարներուն չմատնելու քրիստոնեայ թագաւորն ի ձեռս անօրինաց որք թըշնամի են քրիստոնէական կրօնքին և չեն տեղեակ տնօրինական կրից և փրկագործութեան խորհրդոյն, մինչ իրենց թագաւորն «հմուտ է փրկութեան խորհրդոյն». ուստի իրենց գործը, ոչ այլ ինչ պիտի

լինի եթէ ոչ «ի ծաղր և ի ծանակ տալ զսուրբ խորհրդի հաւատոյս մերոյ»:

Բ.

Էջ 182. տող 12

«Բայց զմոգուցն բազմութիւն պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ, և ի վաղիւն ի ծագել արեւուն արս ի նոցանէ րոտով սպանին սրով ի գիւղն որ կոչի Չարեհաւան»:

Թուի ուղղելի՝ Թուով մի միայն թուական գրով թ, որ է ինն:

1. Տգ. Վնեթիկ, Ս. Ղաթար, 1873.